



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

<< ՕՁ >> սեպտեմբեր 2014 թ. N 256-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՆ ՈՒ  
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 8-ի N 1237-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության առջև դրված գործառույթներն արդյունավետ իրականացնելու, բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում հասարակության լայն շերտերի ներգրավվածությունն ապահովելու նպատակով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից հասարակական խորհուրդ:
2. Հաստատել.
  - 1) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,
  - 2) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ

Վ. Գրիգորյան

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Երևան

« ՕՁ » սեպտեմբեր 2014 թ.

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

1. Ա. Գրիգորյան Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար (խորհրդի նախագահ),
2. Ժ. Գալյան «Հայկական էկոտորիստական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ)
3. Է. Գրիգորյան «Բնապահպան իրավաբանների և տնտեսագետների երիտասարդական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
4. Կ. Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
5. Ի. Զարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ)
6. Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն», հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ),
7. Ռ. Խաչատրյան «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» նախագահ, (համաձայնությամբ),
8. Ա. Հովհաննիսյան «Հիմք» բնապահպանական, բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
9. Ա. Համբարձումյան «Խազեր» էկոլոգամշակութային հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
10. Ա. Հովհաննիսյան «Բնապահպան տնտեսագետների երիտասարդական միություն» հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
11. Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
12. Գ. Նանյան «Քայլ» հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
13. Գ. Օգանեզովա «Հայկական բուսաբանական ընկերություն» հասարակական կազմակերպության նախագահ, (համաձայնությամբ),
14. Ա. Վարդանյան Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ, (քարտուղար):

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ  
ՀԱՍԱՐԱԿԱՎԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում են հասարակական խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը:

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին կից Հասարակական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) բնապահպանական պլանների, ծրագրերի, քաղաքականության մշակմանը հասարակայնության մասնակցությունը համակարգող անկախ խորհրդատվական կառույց է:

3. Խորհրդի գործունեության նպատակներն ու խնդիրներն են՝

1) հասարակայնությանն իր կողմից քննարկված էկոլոգիական հիմնախնդիրների մասին տեղեկացնելը,

2) էկոլոգիական պլանների, ծրագրերի, քաղաքականության մշակման գործընթացին մասնակցելը,

3) էկոլոգիական պլանների, ծրագրերի, քաղաքականության նախագծերի վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը եւ հասարակայնությանը ներկայացնելը,

4) քննարկվող նախագծերին այլընտրանքային տարբերակներ ներկայացնելը,

5) բնապահպանական օրենսդրական փոփոխություններ, լրացումներ կատարելու և նոր իրավական ակտեր մշակելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

6) շրջակա միջավայրին առնչվող պլանների, ծրագրերի և քաղաքականության մշակման և իրականացման հետ կապված այլ հարցերի վերաբերյալ առաջարկությունների և եզրակացությունների քննարկելը և ներկայացնելը:

II. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

4. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը:

5. Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով՝ սույն աշխատակարգի 9-րդ կետին համապատասխան:

6. Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է խորհրդի նախագահը:

7. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նիստը կարող է վարել անդամներից մեկը՝ խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

8. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ խորհրդի նախագահի տեղեկատվության ներկայացմամբ:

9. Խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

10. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի կազմի առնվազն երկու երրորդը:

11. Խորհրդի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

12. Խորհրդի այն անդամը, ով համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, ինչը կցվում է որոշմանը:

13. Խորհրդի անդամները խորհրդի նիստի անցկացման օրվա, վայրի, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 7 օր առաջ:

14. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

15. Խորհրդի նախագահի հանձնարարությամբ, խորհրդի նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով նախնական քննարկումներ կազմակերպելու համար կարող են հրավիրվել խորհրդակցություններ՝ խորհրդի անդամների առնվազն մեկ երկրորդի մասնակցությամբ:

### III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ

16. Խորհրդի նախագահը՝

1) վարում է խորհրդի նիստերը.

2) ստորագրում է խորհրդի խորհրդատվական որոշումները և նիստերի արձանագրությունները, խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները.

3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստը.

4) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի նիստի օրակարգը,

5) խորհրդի ընդունած որոշումների կատարման նկատմամբ իրականացնում է վերահսկողություն.

6) իրականացնում է սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

17. Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1) խորհրդի նիստից առնվազն 3 օր առաջ գրավոր հարցեր ներկայացնելու խորհրդի նիստի օրակարգում ընդգրկելու համար.

2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

3) ծանոթանալու խորհրդի նիստերի արձանագրություններին:

18. Խորհրդի անդամը պարտավոր է՝

1) մասնակցել խորհրդի աշխատանքներին.

2) իրականացնել սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

### IV. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

19. Խորհրդի քարտուղարը խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն աջակցելու նպատակով՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում խորհրդի անդամներին.

2) կազմում է խորհրդի նիստերի արձանագրությունները.

3) ապահովում է խորհրդի նիստի որոշումների նախագծերի կազմումը.

4) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները.

6) կազմակերպում է խորհրդի որոշումների տրամադրումը խորհրդի անդամներին և համապատասխան կազմակերպություններին:

#### V. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

20. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

21. Խորհուրդն իր գործունեության մեջ առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն Աշխատակարգով:

22. Խորհուրդը համագործակցում է այլ հասարակական կազմակերպությունների հետ:

23. Խորհրդի անդամին Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից տրվում է Խորհրդում անդամությունը հավաստող փաստաթուղթ:

24. Խորհրդի անդամների ցանկը տեղադրվում է Բնապահպանության նախարարության էլեկտրոնային կայքում:

25. Անհրաժեշտության դեպքում Խորհուրդն իր գործունեության մեջ կարող է ներգրավել համապատասխան մասնագիտական ուղղվածությամբ փորձագետներ:

26. Խորհրդի միջնորդությամբ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը փորձագետին տալիս է ժամանակավոր անցաթուղթ՝ նախարարություն այցելելու համար: